ՀՀԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտ, 2023 թվականի № 26-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, 28-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված «Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի 21-րդ կետով, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2023 թվականի մարտի 29-ի N Ռ/23-01/28 գրությունը և հաշվի առնելով Ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտի եզրակացությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով ֆինանսական հաշվետվությունները (2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ)՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

31 մարտ, 2023 թվականի

ք. Երևան

Հավելված 1

Հանրային հեռարձակողի խորհրդի

31 մարտ, 2023 թ. N 26-Լ որոշման

Հաստատում եմ՝

Հանրային հեռարձակողի
խորհրդի նախագահ

_____ Ա. Շիրինյան

31 մարտ, 2023 թ.

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի 2022 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով տարեկան ֆինանսական հաշվետվություններ